

12632

308(47)
5-66

28 JUN 2013

12632

308(47) Ար
Բ-66

25 SEP 2006

F1 DEC 2009

ԼԳԵՄ ԱՌԱՋԻՆ ԱՎՏԻՃԱՆԻ

№ 1 ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ

1003
14006

259

Հ. Խ. Ս. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ-1926

* * *

Կոմյերիտմիության քաղ-դաստիարակչական
աշխատանքների ամենահիմնական խնդիրն ե հան-
գիսանում—կոմյերիտական մասսաներին ծանո-
թացնել կուսակցության քաղաքականության և
մեր սոցիալիստական շինարարության հիմնական
խնդիրների հետ։ Այդ աշխատանքը, բջիջներից
բացի, տարվում ե նաև մեր քաղ-դպրոցներում։

Մինչև հիմա, մի շարք առարկայական դըժ-
վարությունների պատճառով, հնարավոր չել յե-
զել քաղ-դպրոցները ապահովել հարկ լեզած գլ-
րականությամբ։ Գրականության պակասը կազ-
մել ե մեր քաղ-դպրոցների հիմնական թերու-
թյուններից մեկը։

«Առաջին աստիճանի քաղ-դպրոցի գրադա-
րան»-ի հրատարակությունը դադիս ե մասսամբ
լրացնելու այդ բացը։

«Առաջին աստիճանի քաղ-դպրոցի գրադա-
րան» անվան տակ լուս են ընծայվելու առան-
ձին զրուցներով ընդամենը 14 բրոցյուր, փո-
րոնք իրենց բովանդակությամբ կապված են

միմյանց հետ և կազմում են մի ամբողջական
ձեռնարկ:

Գրադարանն առաջին աստիճանի քաղ դըպ-
րոցների համար ձեռնարկ ծառայելով հանդերձ,
միաժամանակ կարող ե նյութ մատակարարել
կուսակցության արդի քաղաքականությամբ և
մեր շինարարության խորիներով հետաքրքրվող
յերիտասարդ ընթերցողին:

ՀԱՅԵՄ ԿԵՆՏԿՈՄ

ՄԵՐ ՑԵՐԿԻ ՌԸ

ԽՍՀՄ ՔԱՐՏԵԶԸ

ԽՍՀՄ ԲՈՆՈՒՄ Ե ԱՇԽԱՐ- Մեր յերկրի ամբողջ
ՀԻՄ ՄԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՄԱՍԸ տարածությունը կազ-
մում ե մի հսկայական յերկրածաս, վորը հավա-
սար ե յերկրագնդի ամբողջ ցամաքի մի լոթե-
րորդ մասին: ԽՍՀՄ բոնում ե ամբողջ Յեվրոպակի
կեսը և Ասիակի մի յերրորդ մասից ավելին: (Կա
ընդաւենը հինգ աշխարհամաս՝ Յեվրոպա, Ասիա,
Ամերիկա, Աֆրիկա և Ավստրալիա: Յեթե հետա-
քրքրվում ես, հեշտությամբ այդ մասերը կարող
ես գտնել յերկրագնդի քարտեզի վրա): ԽՍՀՄ
Յեվրոպական և Ասիական մասերի մեջ սահմանն
ե Ուրալյան լեռնաշղթան: ԽՍՀՄ մեծության մա-
սին հաօկացողություն կազմելու համար՝ բավա-
կան ե հիշել, վոր այն ժամանակ, յերբ յերկրի
մի ծայրում ցերեկ ե, նրա հակառակ ծայրում զի-
շեր ե լինում:

Հետաքրքիր ե համեմատել ԽՍՀՄ տերիտոր-
յան մյուս յերկների տերիտորիաների հետ
(տերիտորիա յե կոչվում մի վորոշ հողամաս,

կամ մի շրջան, վորը պատկանում է վորեւ պետության): Մեր նահանգներից կամ շրջաններին վոմանք, մի քանի անգամ ավելի մեծ են, քան այնպիսի խոշոր պետություններ, ինչպիսին են՝ Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան։ Այսպես որինակ՝ մեր Արքանգելուկի նահանգը յերկու անգամ ավելի մեծ է, քան Գերմանիան կամ Ֆրանսիան և յերեք անգամ մեծ՝ Իտալիայից։ Յենիսեյան նահանգը 5 անգամ մեծ է Գերմանիայից կամ Ֆրանսիայից և 9 անգամ մեծ՝ Իտալիայից։

Մեր յերկիրը հարուստ է մեծ, լայն և ջրառատ գետերով։ Սուանձնապես մեծ նշանակություն ունի Վոլգան, Վոլգան իր մեծությամբ և ջրառատությամբ ամենամեծ գետն է ամբողջ Յեվրոպայում։ Նրա յերկարությունը յերեք և կես վերստ է, լայնությունը համառում է չորս վերստի, իսկ խորությունը (տեղ-տեղ) տասն և հինգ սաժեն է։ ԽՍՀՄ սահնամեծ գետը Սիրիրի Յենիսեյ գետն է։

Մեր յերկիրը սահմանափակվում է ցամաքով և ծովերով։ Ծովային սահմաններն իրենց յերկարությամբ յերկու անգամ ավելի լեն ցամաքային սահմաններից։ ԽՍՀՄ սահմանների ընդհանուր տարածությունը 65,000 կիլոմետր է։

Կլիման, չորջ Ցեղ, Բնակ-Պարզ, պիսի հակայական տա-

րածության վրա, իրենց բնական պայմաններով՝ գորություն ունեն ամենատարբեր շրջաններ, տարբեր կլիմա տարբեր հող և բուսականություն։ Վերցնենք, որինակ, Սառուցյալ ովկիանոսի ափերին 50-ից մինչև 100 վերստ լայնությամբ ձգվող տունդրան և Ղրիմի հարավային ափերը։ Տունդրայում ամառը տևում է 2-3 ամիս, մնացած ամբողջ ժամանակ տանդրան ծածկված է ձնով։ Արևն այնտեղ անգոր է։ Հողի ներքին շերտերը շարունակ սառած են մնում։ Ամառվա աշխաներին մաղում է բարակ անձրեր, անընդհատ փչում ե սառը քամին, յերկինքը պատած է լինում ամպերով։

Միանգամայն հակառակ պատկեր են ներկալացնում Ղրիմի հարավային ափերը. դա մի հսկայական ջերմոց ե՝ հարուստ հարավային բուսականությամբ։ Ամբողջ յերկիրը ծածկված է մրգերի և խաղողի այգիներով, ողը լի յե վարդի, սպիտակ ակացիայի և զանազան այլ ծաղիկների բուրմունքով։

Բնական ալյոֆան տարբեր պայմանների շնորհիվ Միության առանձին վայրերում բնակչության խտությունը միատեսակ չե. (բնակչության խտություն և կոչվում բնակիչների այն քանակը, վոր ընկնում է յերկրամասի մի վորոշ տարածության, որինակ մի քառակուսի կիլոմետրի

վրա): Այսպես, որինակ՝ Միության Ցեղոպահ-կան մասում ապրում է մոտ հարյուր տասն և մեկ միլիոն բնակիչ: Իսկ Աստական մասում, վորոն յերեք անգամ սվելի ընդարձակ է, բնակիչների թիվը համառում է միայն մոտ քսան և յերեք միլիոնի: Վրաստանում մի քառակուսի կիլոմետրի վրա ապրում է մոտ 50 մարդ: Միջինը ընդամենը 1 մարդ, Ուկրայնիայի Հանրապետությունում 66,4% ավելի, իսկ Կիրգիզիայում մոտ 3 հոգի:

Մեր Խորհրդային Միության ամբողջ բնակչությունը՝ 1925 թվին համառում եր համարյա 140 միլիոնի (139,754,000), ԽՍՀՄ բնակչության յուրաքանչյուր հարյուրից մոտավորապես 16 հոգի ապրում է քաղաքում, 84 հոգի գյուղում:

ԱՇԽԱՏԱՆՔ. 1) Յուլյ տալ քարտեզի վրա ԽՍՀՄ սահմանամերձ պետությունները: 2) Կազմեցեք ԽՍՀՄ բնակչության՝ ըստ քաղաքի և գյուղի բաշխման դիագրամը:

ԱԽՍՖՀ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԽՍՀՄ կազմի մեջ հավասար իրավունքներով մտնում և Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը (ԱԽՍՖՀ): Անդրկովկասում կան յերեք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություններ՝ Հայաստան, Վրաստան և Ադրբեյջան: Անդրկովկասի

ընդհանուր տարածությունը հավասար է 176,523 քառակուսի կիլոմետրի: Բնակչության թիվը է 5,930,150:

Անդրկովկասի գետերից նշանագոր են՝ Ռինը, Քուռը և Յերասիլը, կամ Արաքսը: Արաքսի վտակներն են՝ Ախուրյանը (Արփաչալ), Հրազդանը (Զանգին), Քասախը, Ազատ գետը (Գյառնի չալ) և այլն: Քուռն Անդրկովկասի ամենամեծ գետն է և ունի 1.113 կիլոմետր յերկարություն: Նա միանալով Արաքսին թափվում է Կասպից ծովը: Անդրկովկասի գետերը նավարկելի չեն՝ իրենց լեռնալին բնույթի պատճառով: Նավակելի յե միւն Քուռը՝ սկսած Ցեղլախից մինչեւ գետաբերանը և Ռինին ստորին հոսանքը: Անդրկովկասի ամենամեծ լիճն է Սևանը կամ Գեղամա «ծովը»:

Անդրկովկասում, ինչպես և ամբողջ ԽՍՀՄ մեջ բնական պայմանները չափազանց տարբեր են: Տարբեր ե բնակչության խտությունը: Միջին թվով մի քառակո սի կիլոմետրին ընկնում ե 31,2 հոգի (Ադրբեյջանում՝ 21,8, Վրաստանում՝ 37, Հայաստանում՝ 30): Բնակչությունն ըստ քաքարի և գյուղի բաշխված ե այսպես: —Վրաստանում քաղաքի ազգաբնակությունը կազմում է ընդհանուր բնակչության 19,2%, Ադրբեյջանում 22%, Հայաստանում 14%:

Հայաստանը Խորհրդացին Սոցիալիստական Հանրապետություն ե հայտարարված 1920 թվի նոյեմբերի 29-ին։ Հյուսիսում Հայաստանը սահմանակից ե Վրաստանին, արևմուտքում՝ Թյուրքիային, հարավում՝ Նախիջևանի հանրապետության ու Պարսկաստանին և արևելքում՝ Աղբյեջանին։ Հայաստանը բաժանված ե 9 գավառի։ Յերևանի, Լենինականի, Եջմիածնի, Նոր-Բայազետի, Դիլիջանի, Զանգեզուրի, Լոռու-Փամբակի, Դարալագլազի և Մեղրի։ Հայաստանի բնակչության թիվը հասնում է սու 1 միլիոնի, վորից 671,450 հայեր են, իսկ մնացածը Աղբյեջանի թուրքեր, ասորիներ, հույներ, քրդեր, ուսուներ և այլ ազգեր։

ԽՍՀՄ ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽՍՀՄ ունի անթիվ հարստություն։ Իր բնական հարստությունների քանակով ԽՍՀՄ առաջին տեղն ե գրավում աշխարհի մնացած յերկրների մեջ։

Քարածուխ, նավթ, կիզանող (տորֆ), յերկաթ, մարգանեց, փոսկի, արծաթ, պլատին, պղինձ, կապար (արճիճ), անագ, աղ, փայտեղեն, կաշվեղեն, ձուկ—ահա տնտեսական կյանքի այն կարևորագույն հարստությունները, վոր մեծ քանակությամբ ունի մեր յերկրը։

Պարզենք, թե վորքան հարուստ ենք մենք յերկաթով, քարածուխով և նավթով։ Այս յերեք հանքերը գլխավոր նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության մեջ։

ՅԵՐԿԱԹ. Յերկաթից են պատրաստվում արտադրության բոլոր միջոցները՝ սկսած հասարակ գործիքներից մինչև բարդ մեքենաներն ու կառուցվածքները, ինչպիսին են շարժիչները, շագենավերը, կամուրջները։ Ներկայումս շենքերի մեջ ել գլխավոր նյութը յերկաթն է։ Յերկաթից են պատրաստում նաև մեր յերկրի պաշտպանության միջոցները՝ հրացանները, թնդանոթները, արկերը (թնդանոթի գնդակները), զրահակիրները։

Վորքան ավելի յե զարգանում տեխնիկան, ձեռքով կատարած աշխատանքը վորքան ավելի շատ ե փոխարինվում մեքենայով, այնքան ավելի շատ ե մեծանում յերկաթի պահանջը։ Նայած, թե վորքան, յերկաթ ե սպառում վորեւ յերկիր, կարելի յե ասել, թե վորքան ե առաջ գնացել այդ յերկրի զարգացումը։ Վորքան ավելի հետամնաց ե մի յերկիր, այնքան քիչ յերկաթ ե նա սպառում։ Յարիզմի լծի տակ Ռուսաստանի տնտեսական զարգացումը յետ ե մնացել մոււս յերկրներից, և մենք տեսնում ենք, վոր Ռուսաստանում պատերազմից առաջ բնակիչներից յուրաքանչյուրը 16 անգամ ավելի քիչ յերկաթ ե

սպառում, քան Ամերիկայի Հրուսիսային Նահանգ-ները և 12 անգամ ավելի քիչ՝ քան Գերմանիան (Բուսաստանում տարեկան— $1^{1/8}$ փութ, Ամերիկայում՝ մոտ 18 փութ, Գերմանիայում՝ մոտ $13^{1/2}$ փութ): Առայժմ մենք դեռ չենք կարողացել այդ թվերը փոխել մեզ համար նպաստավոր ձեռք:

ԽՍՀՄ չափազանց առատ ե յերկաթով: Յերկաթովչափազանց հարուստ հանքեր կան Կուրսկի նահանգում, Ռոբալում, Ռեկրայնիայում (Կրիվոյ Ռոգի շրջանում) և Կովկասում: Միայն Կուրսկի նահանգի յերկաթահանքերում հաշվվում ե մոտ տասնեռութ միլիարդ փութ յերկաթ (մեկ միլիարդը հազար և հազար միլիոնի): Այդ հանքերը գտնված են միայն 1923 թվին:

ՔԱՐԱԾՈՒԽ Մեքենան պատրաստվում ե յեր-
Յեզ ՆԱԳԹ. կաթից, բայց նրան շարժողը վա-
ռելիքն ե: Բավական քանակությամբ լավ և աժան
վառելանյութ ունենալը յերկը տնտեսական հաջող
զարգացման գլխավոր պայմաններից մեկն ե:
Հենց արդպիսի վառելանութ են քարածուխն ու
նավթը: Քարածխի մինչև այժմ մեզ հայտնի հան-
քերով ԽՍՀՄ աշխարհի բոլոր յերկրների մեջ
յերրորդ տեղն ե գրավում: Բայց յեթե նկատի
ունենանք, վոր դեռ չգտնված, չհետազոտված
հանքեր շատ կան մեզանում, մենք կը տեսնենք,

վոր մեր ածուխի պաշարն անհամեմատ ավելի շատ ե:

Նավթը, վորպես վառելանյութ, քարածխի հետ համեմատած՝ ունի մի շարք առավելություններ: Նա քիչ տեղ ե բռնում, նրա փոխադրելը հեշտ ե, նա ավելի շահավետ ե: Նավթ ե գործածվում մեծ, ուժեղ շարժիչների համար: Նավթային վառելանյութին են անցել շոգենավերի մեծ մասն ու ուղղմական նավատորմը: Շատ յերկրներում այժմ արգեն նավթ ե գործածում նաև յերկաթուղին: Նաև թվը վերամշակված ձեռվ (բենզին) գործադրվում ե ավտոմոբիլների, այերոպլանների համար:

ԽՍՀՄ իր նավթի պաշարով նույնպես առաջանկարգ տեղերից մեկն ե գրավում մյուս յերկրների մեջ: Մոտավոր հաշվով մեր նավթահորերի նավթի քանակը համար ե հիսուն և չորս միլիարդ փթի: Բայց, անշուշտ, իրականում այդ պաշարն անհամեմատ ավելի մեծ ե, քանի վոր նավթային շատ շրջաններ ամենեին հետազոտված չեն:

Մեզանում նավթը գտնվում ե գլխավորապես Կովկասում: Ամենախոշոր նավթավայրը Բագվի շրջանն ե, այնուհետև գալիս ե Գրոզնու շրջանը, հետո Եմբան—Կիրգիզիայի Խորհրդացին հանրապետությունում:

Բայց քարածուխն ու նավթը միայն լավ վառելանյութ չեն: Քարածուխն ու նավթը արդյունաբերությանը մի շարք այլ չափազանց արժեքավոր նյութեր են տալիս: Այսպես որինակ, քարածուխից ստացվում է լուսատու գագ, կարբուզան թթվուտ, անուշատը (նաշատիր), ձյութ, նավթալին և այլն: Նավթից ստացվում է կերոսին (սպիտակ նավթ), գազոլին, բենզին, մազութ, մեքենայի յուղ և այլն արժեքավոր նավթամթերքներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի լեռնային հարստություններից խոշոր նշանակություն ունի պղնձը: Ներկայումս գործում են Սլահվերդու (Լոռու գավառում) և Ղաթարի պղնձահանքերը (Զանգեզուր): Այդ պղնձահանքերը համաշխարհային խոշոր նշանակություն ունեն: 1913 թվին Ղաթարի գործարանն արտադրել է 110,266 ֆութ պղնձ, Սլահվերդու հանքը՝ 231,540 ֆութ: Զանգեզուրի հանքերը պղնձով ավելի հարուստ են, նրանք տալիս են $10\text{--}16^{\circ}/_0$ պղնձ: Ապագայում այդ պղնձահանքերի նշանակությունն ավելի յե բարձրանալու, քանի վոր նըսնից ընդամենը 30 վերստ հեռավորությամբ անցնում է Սլիաթ—Զուլֆա յերկաթուղին, վորի հետ ծրագրվում է հանքը

միացնել առանձին ճյուղով: Թէ Սլահվերդու և թէ Ղաթարի պղնձահանքերն իրենց մեջ պարունակում են նաև վոսկի ու արծաթ: Բացի գրանից Սլահվերդու գործարաններում ստացվում ե ծըծմբային և աղային թթվուտներ, պղնձի և յերկաթի արջասպ (կուպարոս), և կարբիտ: Հայաստանում պղնձահանքեր կան և այլ վայրերում: որինակ՝ Փիրդովդան կոչված տեղում, վորը Ղաթարի հանքերից հեռու յե ընդամենը 35 վերտով: Հայաստանում գտնվում ե նաև պեմզա(Լենինականի, Սուխոյ Ֆանտանի և Եջմիածնի շրջաններում): Պեմզան գործադրվում է ապակի, մետաղներ ու փայտ հղկելու համար: Դարալագյազի շրջանում կան կապարի և արծաթի հանքեր, վորոնց պահանջը շատ ե: Իջևանի շրջանում կա ընտիր վիմագրական քար, վորը գործ և ածվում տպագրության մեջ և կարող ե հում նյութ լինել ցեմենտի համար: Հայաստանում կա նաև գրաֆիտ, վորից մատիտներ են պատրաստում, ըսպիտակ կավ, կառլին, վորից կարելի յե ֆայանս ամաններ պատրաստել և ցինկ:

Ինչպես ենք ՈՒԺԱԳՈՐ- Մեր արնքան մեծ ԾՈՒՄ ՄԵՐ ՀԱՐՍՈՑՈՒ քանակությամբ բնաթօնինք: կան հարստությունը և մասնավորապես՝ յերկաթը, քարածուխն ու

Նավթը մեծագույն հնարավորություններ են ըստեղծում մեր Միության անտեսության զարգացման, սոցիալիզմի շինարարության համար: Բայց արդյոք, մենք բավականաչափ ոգտագործում ենք այդ հնարավորությունները: Բնավ յերբեք: Նույն իսկ մենք դեռ բավականաչափ ծանոթ չենք մեր բոլոր հարստություններին: Իսկ այն հարստությունները, վորդի մասին մենք գիտենք, դեռ անշարժ մնում են հողի խորքերում: Հարստությունների ունեցած պաշարով մենք առաջնակարգ տեղն ենք բռնում, իսկ արտադրությամբ (որինակ՝ յերկաթի, քարածուխի ու նավթի արտադրությամբ) մենք խիստ հետ ենք կապիտալիստական զարգացած պետություններից:

Սեր անտեսական հետ մնացության գիտագործական անցյալից ստացած ծանր ժառանակությունն ե: Թագավորի իշխանության որոք, յերկրի բնական հարստությունների մշակումը կատարվում եր վոչ թե յերկրի ամբողջ տնտեսության, այլ մի խումբ կալվածատերերի ու կապիտալիստների շահերի տեսակետից: Կապիտալիստը շահագրգութած եր սիայն նըանով: Վորավելի կարծ ժամանակամիջոցում ավելի շատ յեկամուտ ստանա: Յեվ բնական հարստությունների մշակումը կատարվում եր թալանչական յեղանակներով: աեղամասերից մեկն ուժասպառ

եր արվում, իսկ մյուսները հսկայական տարածությամբ մնում եյին առանց ձեռք տալու:

Ցարական ուժինն ամեն կերպ հակազդում եր բնակչության կուլտուրական զարգացմանը: Բացի տեխնիկական հետամնացությունից մենք ժառանգեցինք և կուլտուրական մեծ հետամնացություն: Ցարական իրավակարգի այս անիծված ժառանգությունը հիմա ազդում է մեր շինարարության վրա, մեզանից պահանջում է ուժերի հակաբական լարում: Հոկտեմբերյան հեղափոխությունը չտեսնված հնարավորություններ ստեղծեց մեր յերկրի անտեսությունը բարձրացնելու՝ սոցիալիզմ կառուցելու համար:

ԽԾՄ այժմ մի յերկիր ե, վորտեղ բնական հարստությունների ոգտագործումով շահագրգութած են բոլոր աշխատավորները: Կապիտալիստական բոլոր յերկրներում բնական հարստությունների մշակումը հարստացնում է կապիտալիստներին, ամրացնում է նրանց իշխանությունը: Իսկ մեզանում, յերկրի բնական հարստությունները պատկանում են բանվորական պետությանը: Այդ հարստությունների մշակումն բարձրացնում է բոլոր աշխատավորների բարեկեցությունը: Այս պատճառով ել, մեզանում, բնական հարստությունների մշակմանը յեռանդով մասնակցում են բարձրացնելի մասսաներ:

Մեր Միությունը միակ լերկիրն է, փորտեղ բնական հարստությունների մշակումը կատար վում է վոչ թե առանձին կապիտալիստների միջն տեղի ունեցող անկանոն մրցման ոլայմաններում, այլ վարոշակի ծրագրով, վոր կազմված է լերկի ամբողջ շահերի համեմատ:

Մեր բնական հարստությունները սպասում են բանվորա-գլուղացիական ձեռքերի: Տարեցարի աճում և Միության տնտեսական ուժը, կառուցողների նոր ջոկատներ են հասունանում: Քաղաքացիական պատերազմի ծանր տարիներից հետո, ԽՍՀՄ աշխատավորներն ահա երդ տարին են, ինչ զբաղված են տնտեսության շինարարությամբ: Կառուցողների այդ ջոկատները, հողի խորքութափնվածներ հարստությունները — բանվորների և գյուղացիների բարեկեցության անորինակ բարձրացման մի աղբյուր կը դարձնեն: Այդ հարստությունները հիմք կը ծառայեն արդունաբերության այնպիսի մի հզոր զարգացման, վորը կը վերափոխի ԽՍՀՄ — արդյունաբերական առաջավոր սոցիալիստական լերկիր կը դարձնի այն:

Խորհրդավինն հայաստանն, իր հարևաններին կատամբ, անցյալից ավելի վատ ժառանգություն և ստացել: Դրա պատճառն այն է, վոր ցարական կառավարությունը լերբեք մտահոգված չի լեղել,

վորպեսպի լերկիր ծայրամասերում զարգանա արդյունաբերությունը: Յարական կառավարության տապալումից հետո, իշխանությունը դաշնակցականներին անցավ: Սրանք զբաղված լինելով լեղբարասպան կոփմներով, վերջնականապես կործանման մատնեցին մեր արդյունաբերությունը: Մեզ ժառանգություն մնացած արդյունաբերության մեջ, լեթե կային մի քանի՛ փոքրի շատե զարգացած ձյուղեր, սրանք ել միանգամայն քայլաված վիճակի մեջ եյին: Սակայն Խորհրդավին հայաստանի բանվորների և գյուղացիների աննկուն կա լքով և համերաշխ ջանքերով կարճ ժամանակից հետո հնարավոր կը լինի հին ավերակների տակից վերածնել մեր արդյունաբերությունը և նրան այնպիսի բարձրության վրա գնել, վորին նա անցյալում չեր կարող հասնել տամյակ տարիների ընթացքում:

ԱՇԽԱՏԱՆՔ. Իմաշեք, թե ինչ վառելանյութով և աշխատում ձեզ մոտ յեղած ձեռնարկությունը. գործադրվում են, արդյոք, այստեղ նավթամթերքներ՝ բենզին, մազութ, մեքենայի յուղ և այլն:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱ- ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Այժմ անցնենք ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության լերկու կարևորագույն ճյուղերին՝

գլուղատնտեսությանն ու արդյունաբերությանը:

Մեզանում արդյունաբերություն ունի 13
ձյուղ:*)

Արդյունաբերության այդ ճյուղերից յուրաքանչյուրն ունի անտեսական իր խոշոր նշանակությունը: Սակայն մենք քննության կառնենք միայն մետաղագործական, լեռնային (քարածուխային ու նավթային) և մանածագործական ճյուղերը: Արդյունաբերության այս ճյուղերն ամենամեծ նշանակությունն ունեն ժողովրդական անտեսության համար:

ՄԵՏԱՂԱԳՈՐԾԱԿԱՆ Մենք տեսանք, թե յերարդՅՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ. կաթը ինչ հսկայական նշանակություն ունի յերկը անտեսական կյանքում: «Մետաղագործական արդյունաբերությունը ամբողջ արդյունաբերության հիմքն եւ: Վոչ թեթև արդյունաբերությունը, վոչ տրանսպորտը, վոչ վառելանյութը, վոչ ելեքտորֆիկացիան, վոչ գլուղատնտեսությունը չեն կարող վառքի կանգնել առանց մետաղագործական արդյունաբերության զարգացման: Մետաղագործական արդյու-

*) Լեռնային (հանքավին), նավթային ուք առածիալին, մետաղագործական, մանածագործական (տեքստիլ), ելեքտրոտեխնիկական, սննդամատակարարման, կաշվեգործական, տպագրական, քիմիական, պահպանական, առողջապահական (սիլիկատ), թղթի, փայտագործական, կագործական (սիլիկատ), թղթի, փայտագործական, կագործական, շինարարական:

նաբերության աճումը ամբողջ արդյունաբերության, ընդհանրապես՝ ժողովրդական տնտեսության աճման հիմքն եւ (Մտալին):

Մետաղագործական արդյունաբերական ճյուղերից ամենակտորն եւ մետաղաձուլական արդյունաբերությունը, վորը ձուլում եւ չուգուն և պղղպատ: Այդ ճյուղի գործարաններից մեծ գասը, ձուլելու հետ միասին, զլանում եւ չերշաթ: Մետաղաձուլական արդյունաբերությունից ետո, իր կարևորությամբ յերկրորդ տեղն երավում մեքենաշինարարական արդյունաբերությունը, վորը պատրաստում եւ արտադրության միջոցներ (մեքենաներ, գործիքներ և այլն) և մասնագորապես՝ գլուղատնտեսական մեքենաներ:

Մետաղագործական արդյունաբերության ճյուղերից են՝ նավաշինարարական արդյունաբերությունը և շոգեշարժերի ու վագոնների արտադրությունը: Մետաղաձուլության զիսավոր կենտրոններն են. — Դոնեցկի ավագանը (նրան կից կրիվոյ Ռովդի ավագանը, Յակատերինոսլավի նահանգը) և Ուրալը. Շոգեշարժերի ու վագոնների շինարարության և մեքենաշինարարության կենտրոններն են՝ Լենինգրադը (ամենախոշորն եւ՝ Պուտիլովյան գործարանը) Մոսկվայի նահանգը (ամենախոշորն եւ կոլոմենյան գործարանը), Բրյանսկի նահանգը, Լուգանսկը (Դոնեցկի ավագանը), Խարկովը (գլու-

զատնտեսական մեքենաներ): Նավաշինարարական արդյունաբերության գլխավոր կենտրոններն են՝ Լենինգրադն ու Նիկոլաև:

ՔԱՐԱԾՈՒԽՈՅԻՆ ԱՐԴՅՈՒԽԻՆ Քարածուխը ստաց-
ՆՈԲԵՐՈՒԹՅՈՒՆ վում ե ածխահան-
քերում: Այդ հանքերը գետնի տակ փորած խոր
հորեր են: Այնտեղ աշխատում են հաքափորները,
ածխահանները: Արտադրված ածուխը հատուկ
հարժարանքներով գետնի խորքից վերև ե բարձ-
րացվում:

Իր նշանակությամբ, կարևորագույն քարա-
ծխային շրջանն ե Դոնեցկի ավագանը: Քառասուն
հազար քառակուսի վերստ տարածութունը ծած-
կված ե բարձր գորակի ածուխով: Դոնեցկի ա-
վագանը ծովափից հեռու չե, և նրա մոտով անցը-
նում ե յերկաթուղիների խիտ ցանցը, վորով
քարածուխը հեշտությամբ կարելի յե փոխազրել
Միության հեռավոր անկյունները, կամ ուղարկել
աշխարհի ցանկացած յերկիրը: Դոնեցկի ավագանը
խիստ տուժեց քաղաքացիական պատերազմից:
Համարյա յերեք տարի անընդհատ նա ձեռքից
ձեռք եր անցնում: Սպիտակ գվարդիականներն
ավերում երին ածխահանքերն ու գործարանները:
Յեկ միայն 1920 թվի յերկրորդ կիսամյակում
Դոնեցկի ավագանը մաքրվեց հականեղափոխական-
ներից և բանվոր գառակարգը կարողացավ անց-

նել այդ կորեորագույն արդյունաբերական շրջա-
նի վերականգնման աշխատանքներին:

Դոնեցկի ավագանից հետո, իր արդյունաբերա-
կան նշանակությամբ յերկրորդ տեղն ե գրավում
Մուկվալի մոտ գտնվող քարածխալին շրջանը:
Իր վորակով այդ ածուխը ցածր ե Դոնի ածուխից:
Բայց նա մոտ ե գտնվում արդյունաբերական
կենտրոնին և այդ հալում արությունը ծածկում է
նրա թերությունները:

Միության քարածխալին հանքերից ամենա-
խոշորն ե Կուգնեցյան ավագանը՝ Տոմսկունահանգ-
ում (Միքիր): Այս շրջանի ածուխի պաշարը հինգ
անգամ ավելի շատ ե քան: Դոնի ավագանի քարա-
ծխի պաշարը: Բայց Կուգնեցյան ավագանը հեռու
յե արդյունաբերական խոշեր կենտրոններից,
մոտերքում չկա յերկաթուղային խիտ ցանց, այդ
պատճառով ել այդ հարուստ շրջանն առայժմ
վորեւ նշանակություն չունի: Բայց նա անկաս-
կած խոշոր նշանակություն կը ստանա ապագա-
յում, յերբ մեր արդյունաբերությունը կը ծավալ-
վի և կը զարգանա մեր տրանսպորտը: Ուրալյան
քարածխալին շրջանը գլխավորապես հոգում ե
տեղական արդյունաբերության կարիքները:

Դժվար չե համոզվել, վոր քարածխի շրջան-
ները զուգագիպում են մետաղագործական ար-
դյունաբերության զաշգացման վայրերի հետ:

Ալդ առանձնապես պարզ յերեսում ե Դոնեցկի ավա-
ղանում։ Քարածխի և յերկաթի «հարեանությու-
նը» հսկայական հսարափորություններ ե ստեղ-
ծում արդյունաբերության զարգացման համար։
Ալդպիտով Դոնեցկի ավագանին արդյունաբերական
մեծ ապագա յե սպասում։ Զուր չե, վոր քաղա-
քացիական պատերազմի որերին առանձնապես
կատաղի յեր Դոնեցկի ավագանին տիրելու համար
մղած պայքարը։ Զուր չեր, վոր հականեղափո-
խությունը ծայր աստիճան կատաղությամբ ձըգ-
տում եր Խորհրդային հանրապետությունից կըտ-
րել Դոնեցկի ավագանը։

Անդրկովկասում քարածուխը գտնվում ե Ար-
խագիայի Տէկվարչելի ածխահանքերում։ Սրանց
պաշարը հասնում ե 17 միլիարդ փթի։ Ներկա-
յունս այդ քարածուխն արդյունաբերական ար-
ժեք չունի, թեև ընտիր քարածուխ ե և կոկս
ե տալիս։ Նրա վերամշակմանը դիմելու հա-
մար պահանջվում ե տասը միլիոն ռուբլի։ Ան-
դրկովկասի յերկրորդ ածխահանքերը գտնվում
են Տէկվիբուլիում՝ Քութայիսից 40 վերստ դեպի
հյուսիս-արևելք։ Ածխահանքը Քութայիսի հետ
միացված ե յերկաթգծով։ Ալդ հանքի պաշարը
հասնում ե 17 միլիարդ փթի։ Նա այժմ տարե-
կան կարող ե տալ 3-ից մինչև 5 միլիոն փութ
քարածուխ։ Ալդ հանքերի ածուխը, վորակով
բարձր չե, և տեղական նշանակություն ունի։

ՆԱՎԹԱՐԴԴՅՈՒԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ. Նավթային ար-
դյունաբերության ամենակարևոր շրջաններն են
Բագում ու Գրոզնին։ Նավթը արտադրելու հա-
մար հոր են վորում, մինչև վոր հասնում են
Նավթի շերտին։ Ցեթե նավթը գետնի տակ ու-
ժեղ ձնշման յենթակա յե, ապա նա շատրվանը՝
ձևով գուրս ե խփում նավթահորից։ Իսկ այդ
ձնշման բացակայության դեպքում, նավթը հան-
վում ե արհեստական միջոցներով։

Մեր նավթը մեծ հաջողություն ե գտել ար-
տասահմանցան շուկաներում։ Միայն այս տար-
վա ոգոստոս ամսին, Խորհրդային Միությունից
արտասահման ուղարկված նավթամթերքների
քանակը, (չհաշված Պարսկաստան ուղարկածը)
հավասար ե 174,500 տոննի, (տոննը հավասար
ե 61,048 փթի)։ Ալդնավթամթերքներից 56,500
տոննը յեղել ե կերոսին, 36,500 տոննը՝ բեն-
զին, 27,750 տոննը՝ մեքենայի յուղ։

ՄԱՆԱԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ Մանածագործական ար-
դյունաբերության մեջ զբաղված ե ավելի քան
300 հազար բանվոր։ Բանվորների քանակով, մա-
սնածագործական արդյունաբերությունն առաջ-
նակարգ տեղ ե գրափում։ Նրա կենտրոնն ե
արդյունաբերական կենտրոնական շրջանը (Մոսկ-
վայի նահանգը), իվանովո-Վոլգնեսնսկը, Վլա-

դիմիրի, Կոստրոմայի, Տվերի, Յարոսլավի, Մյացանի Նահանգներն ու Լենինգրադը:

Այն ժամանակ, յերբ մետաղածուլական արդյունաբերությունը գանվում է վառելանյութի և հում նյութի շրջաններին մոտ, մանածագործական արդյունաբերությունը բավական հեռու յէ գտնվում վառելանյութի և վոր գլխավորն եւ բամբակագործության կենարոնից:

Վոչ ցարական կառավառության և վոչ եւ դաշնակցականների որոք, Հայաստանում մանածագործարան չի յեղել, թեև այդ արդյունաբերության համար նպաստավոր հող կար մեր յերկը ըստ, և նա հնարավորություն կըտար տեղում մշակելու հում նյութը՝ բամբակը: 1924 թվին, մեր կառավարությունը Լենինականում հիմք դըրեց մանածագործարանին: Սակայն առ այժմ արտադրության անցնել չի կարելի, վորովհետև, նախ պետք է ջուրհակներ պատրաստել: Այդ նպաստակով Լենինականում և Ղարաքիլիսայում բացվեցին դպրոց գործարաններ, վորտեղ, կառուցվող մեծ գործարանի համար պատրաստվում են ջուրհակներ: Գորարանի համար 24 հազար իլիկի մեքենաներ են բերվում Գերմանիայից, վորոնը կըսացվեն մինչև 1927 թիվը: Այսպիսով մանածագործարանը կունենա 40 հազար իլիկ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԻ- Մենք արդեն տեսանք, վոր ԹՅՈՒՆԸ գյուղատնտեսությամբ զբաղված ե բնակչության մեծամասնությունը: Մեր յերկիրը գերազանցապես յերկրագործական յերկիր է: Մենք ունենք մոտ 22 միլիոն առանձին գյուղացիական տնտեսություններ: Տնտեսությունների այդ ցրվածությունը արգելք է հանդիսանում գյուղատնտեսության բարձրացման ու զարգացման համար:

Մեր գյուղատնտեսությունը շատ հետամընաց է: Պատճառն այն է, վոր անցյալում նրա վրա ծանրացած եր կալվածատերերի լուծը, վորոնք գաժան կերպով շահագործում եյին գյուղացիներին, մի հանգամանք, վոր իր խորը ազգեցությունն ե՝ թողել ամբողջ գյուղական տքնականության վրա: Ցարիզմի ժամանակ 30 հազար կալվածատեր իրենց ձեռքում ունեցին 70 միլիոն դեսյատին ամենաընտիր հող: Կալվածատերերի շահերի համար գյուղացիության ճնշող մեծամասնության տնտեսությունը քայլարկում եր, և գյուղացիներն ապրում եյին մշտական շքավորության մեջ:

Ներկայումս ԽՍՀՄ կան գյուղատնտեսական բազմաթիվ ճյուղեր: Կանգ առնենք այդ ճյուղերից յերեքի վրա, այն ե՝ հացահատիկների մշակու-

թի, տեխնիկական բույսերի մշակության և ա-
նասնապահության վրա:

ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ հացահատիկներից - կարեռը
ՄՇԱԿՈՒՅԹԸԸ. նշանակություն ունեն և ամե-
նից շատ տարածված են մեզանում տարեկանը
(րօյք), ցորենը, վարսակն ու գարին: Մեր գլո-
խավոր հացահատիկն ե տարեկանը: Ընդհանուր
առմամբ տարեկանը բռնում է մեր ցանքսերի 38
տոկոսը: ԽՍՀՄ տարեկանի արտադրությունը հա-
վասար է մոտավորապես ամբողջ աշխարհի ար-
տադրածի կեսին:

Ցորենը մեր յերկրում ավելի քիչ ե տարած-
ված, քան թե տարեկանը: Նա բռնում է ե ցանք-
սերի ընդհանուր տարածության միայն՝ 29 տո-
կոսը: Ցորենը ցանքում ե գլխավորապես հարա-
վում և հարավարեկելքում: Ցորենն ամենաթանգ
հացահատիկն ե: Նա խոշոր նշանակություն ու-
նի մեր արտահանության համար: Վերջին տա-
րիներս ի հաշիվ տարեկանի ընդարձակվում ե
ցորենի ցանքսերի տարածությունը:

Վարսակը ոգտագործվում ե գլխավորապես
անասունների կերի համար: Վարսակը բռնում է
ամբողջ ցանքսերի մոտ հինգերորդ մասը: Գարին
գլխավորապես ոգտագործվում է գարեջուր պատ-
րաստելու համար: Գարին բռնում է ամբողջ ցանք-
սերի մոտ 15 տոկոսը:

Հացահատիկների բերքը մեզանում շատ ա-
վելի պակաս ե, քան յեվրոպական յերկրներում:
Որինակ՝ տարեկանի բերքը 1924 թվին ԽՍՀՄ
յեղել ե գեսյատինից մոտ 40 փութ, իսկ Գեր-
մանիայում՝ 110 փութ: Արևոյան յերկրներում
գյուղանտեսության մեջ գործադրվում են հո-
ղի մշակության ու պարտադաշտան լավագույն
միջոցներ: Հողն ախտեց ավելի ուշ ե ուժաս-
պառ լինում և բարձր բերք ե տալիս:

Հայաստանում իմպերիալիստական և մանա-
վանդ ազգամիջյան ու միջեղային պատերազմ-
ների շնորհիվ հացահատիկների մշակույթը, ինչ-
պես և ամբողջ գյուղանտեսությունը, չափա-
զանց խղճակի վիճակի մեջ եր: Սակայն խորհը-
գայնացումից հետո նա սկսում է արագ վերա-
կանգնել: Ցանքսերի տարածությունը աճուր է
հսկայական քայլերով, այսպես, որինակ՝ ցանքսե-
րի ընդհանուր տարածությունը 1923 թ. յեղել է
194,000 գետյատին, իսկ 1924 թվին արդեն հա-
սել է 249,000 գետյատինի: Միայն հոցահատիկ-
ների բռնած տարածությունը յեղել է 2000 ավելի
(գրանից ցորեն՝ 121 հազար և գարի՝ 81 հա-
զար): Այսպիսով 1924 թվին արդեն ցանքսերի
մշակույթը հասել եր նախապատերազմյանի 89,4
տոկոսին: Սակայն նա մոտ տարիներում վոչ մի-
այն կը հասնի, այլև զգալիորեն կը գերազանցի նա-

խապատերագմյանին։ Դրա գրավականն են այն հակացական աշխատանքները, վոր կատարվում են Խորհրդային Հայաստանում վոռոգման, ճահիճների չորացման և ելեքտրոֆիկացիայի համար։ Միայն Շիրակի ջրանցքը, վորն արդեն պարտված ե և սկսել ե գործել անցյալ տարվանից, ջրելու յե 15,000 գեսյատին հող։ Այնուհետև գալիս են Սարդարաբատի ջրանցքը, վորը ջրելու յե 14 000 գեսյատին և մի շարք, համեմատաբար ավելի փոքր ջրանցքներ՝ Եջմիածնի, Եղիլարի, Մամուրի և այլ, վորոնք արդեն պատրաստ են կամ պատրաստվում են խորհրդային իշխանության ձեռքով։

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԴ այն բույսերն են, վորոնք ԲՈՒՑՍԵՐ արդյունաբերությանը հումնյութ են տալիս։ Ամենազիստավոր տեխնիկական բույսերն են՝ բամբակը, վուշը, կանեփը, շաքարի ճակնդեղը։

Բամբակը զլխավոր հումն նյութն ե մանածագործական արդյունաբերության համար։ Բամբակեղենով են աստիճանաբար փոխարինվում մյուս բոլոր գործվածքները։ ԽՍՀՄ բամբակի զլխավոր շրջաններն են Ռուզբեկստանը և Թուրքմենստանը։ Յերկրորդ նշանավոր շրջանն ե Անդրկովկասը։

Բամբակագործության զարգացումը խիստ

անհրաժեշտ ե մեր մանածագործական արդյունաբերության համար։ Քաղաքացիական պատերազմի ընթացքում բամբակագործության զլխավոր շրջանները կտրված ելին արդյունաբերական կենտրոններից, այնտեղ տեր ու տնօրեն ելին ըսպիտակները, և նրանց իշխանությունը չափազանց ծանր անդրագարձավ բամբակագործության վրա։ Դրա համար ել մեր արդյունաբերության համար չի բավականացնում մեր սեփական բամբակը, և մենք ստիպված ենք մեծ քանակությամբ բամբակ ներմուծել արտասահմանից։

Հայաստանում բամբակագործությունը զլուղատնեսության ամենակարևոր ճյուղերից մեկն ե։ Բամբակի ցանքսի վրա յե կենտրոնացած թե՛իշխանության և թե՛ ազգաբնակչության ուշադըրությունը։ Շնորհիվ այն է աղաքականության, վոր վարում եր դաշնակցական կառավարությունը, Հայաստանում, խորհրդայնացման նախորեյին չի ցանքել վոչ մի դեսյատին բամբակ։ Սակայն խորհրդային կառավարության որոք, գյուղատնտեսության այդ ճյուղն արագ վերականգնում ե։ 1924 թվին ցանքած ե յեղել 4000 գեսյատին, իսկ 1924 թվին բամբակի ցանքսը հասնում է արդեն 16 հազար գեսյատին։ Չնայած նրան, վոր այս տարի բամբակի ցանքսերի տարածությունը կրճատվել ե

(ցանված ե ընդամենը 11 հազար 721 դեսյատին), բայց և այնպես, անցյալ տարվանից պակաս բերք չի ստացվի։ Այս տարի Հայաստանում սպասվում է 603 հազար 359 փութ բամբակ։ Ամբողջ Անդրկովկասում այս տարի ցանվել է 84 հազար 974 դեսյատին, և սպասվում է 4 միլիոն 696 հազար 724 փութ բամբակ։ Ընդարձակելով բամբակի մշակության տարածությունը, խորհրդային իշխանությունը սիսամամանակ միջոցներ ե ձեռք առնում վերամշակելու այն բոլոր նյութերը, վոր ստացվում են բամբակից։ Յերևանում հիմնվել ե կորիզի ձիթահան գործարան, վորի ամբողջ արժեքը 800 հազար ըուբլի, և, հիմնված ե և սապնի գործարան։ Այս գործարանները մանածագործարանի հետ միսին ավելի շահավետ կը դարձնեն բամբակագործությունը, և զարկ կը տան յերկրի տնտեսության բարձրացմանը։

Վուշը մշակվում է վուշի թելերի համար, վորից կտավ ե գործվում և կտավատի համար՝ վորից ձեթ ե ստացվում։ Պատերազմից առաջ վուշը բռնում եր ամբողջ ցանքսերի 2 տոկոսը. այժմ այդ տոկոսը ավելի բարձրը ե։ Գլխավոր շրջաններն են՝ Պակովի, Սմոլեն սկի, Տվերի, Վատկաչի նահանգները, հակառակ բամբակի, վուշը միայն բավականանում է մեր ներքին սպառման համար, այլ և արտահանության նյութ

և ծառայում։

Կանեփը նույնպես մշակվում է թելերի և հատիկների համար։ Կանեփի կիսամշակ թելերը, գործազրվում ե կոպիտ գործվածքների, թոկերի, պարաների համար։

Կանեփը գլխավորապես տարածված է Արյուղի, Կուրսկի, Չերնիգովի, Պենզայի, Պոլտավայի, Վորոնեժի, Սմոլենսկու, Տամբովի և Կալուգայի նահանգներում։ Կանեփը նույնպես արտասահման և ուղարկվում։

Ժողովրդական տնտեսության մեջ մեծ նշանակություն ունի շաքարի ճակնդեղը, վորից շաքար և պատրաստվում։ Ճակնդեղը մշակվում է գլխավորապես Ռւկայնիայում։

Վերջին տարիներս, շնորհիվ մեր արդյունաբերության բարձրացման և մեր արտաքին առևտորի զարգացման, տեխնիկական մշակութների աճումը զարգանում է շատ արագ։ Տեխնիկական բույսերը զյուղացիական տնտեսությանն անհամեմատ ավելի շատ յեկամուտ են տալիս, քան հացահատիկները, և խորհրդային իշխանությունն ամեն կերպ նպաստում է տեխնիկական բույսերի զարգացմանը։

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ. Առայժմ գլուղատընտեսության մեջ անասունն ե գլխավոր լծկան ուժը։ Մերենան դեռևս լայն գործադրություն չի

ստացել գյուղացու աշխատանքներում։ Բայց
կամտ-կամաց գյուղն ելեքտրական ուժ և ըստա-
նում, գյուղում ճետպհետե լծկան ուժին սկսում
է փոխարինել մեքենան։

Սակայն անասնապահությունը մնում է,
վորպես գլուղատնտեսության ուրույն ճյուղերից
մեկը, տալով այնպիսի մթերքներ, վորպիսին են՝
միսը, կաթը, յուղը, կաշին, բուրդը և մազը:
Մեզանում անասունները տալիս են և աղբային
պարարտացման մեծագույն մասը:

Պակաս կարեոր նշանակություն չունեն և
կենդանաբուծության այնպիսի ճյուղեր, ինչպի-
սին են՝ թռչնաբուծությունը, ձկնորսությունը,
շերամապահությունը, մեղվաբուծությունը։ Կեն-
դանաբուծությունը հում նյութ ե տալիս կաշվի,
մետաքսի և մննդամատակարարման արդյունա-
բերության։ Կենդանաբուծության զարգացումը
նույնպես ոգտակար ե գյուղացիական անտեսու-
թյան զարգացման համար։

Խորհրդային Հայաստանում անառավահությամբ պարապելու համար բնական մեծ հնարավորություններ կան։ Անսամնապահության համար հարմար են լեռնային և ալպյան շրջանները։ Լեռնային շրջանի մեջ են մտնում բարձրադիր տափաստանների ուսունը (Լոռու դաշտը, Փամբակի հովիար, Շիրակի դաշտը, Նորի-այագեղեցի

գտավառը, Դիլիջանի, Զանգեզուրի և Դարձագլազի
Լեռնադաշտերն ու լեռնահովիտները) և լեռնա-
լանջերը։ Ալպյան շրջանի մեջ մտնում են 2000
մետր բարձրություն ունեցող և սինչև մշտնջենա-
կան ձյան սահմանին հասնող վայրերը՝ բար-
ձրադիր լեռնահովիտներն ու բարձր սարալանջերը

Մեր քայլաված յերկիրը, խորհրդայնացու-
մից հետո աստիճանաբար վերականգնում եւ և
անտեսության այս ճյուղը՝ 1919 թվին մենք
ունեինք միայն 747,000 անասուն, 1922 թվին
796,000, 1923 թվին 1,139,000 և 1924 թվին
1,405 000։ Մենչև պատերազմ մեր անաս-
ունների թիվը հասնում եր 2,364,000-ի։ Ճիշտ
է, մենք գեռ չենք հասել նախապատերազմյան
քանակին, բայց մոտ տարբիներում մենք կը հաս-
նենք և կանցնենք նախապատերազմյան չափից։

Գլուղատնտեսության այս ճյուղի զարգացմանը խոշորագույն չափով նպաստում ե գյուղատնտեսական կոռպերացիան: Մինչև այս տարվա ապրիլի 1-ը, նախնական կոռպերատիվերի թիվը յեղել է 184: Կոռպերացման յենթարկված տնտեսությունների թիվը 1924-ից մինչև 1926 թիվը 9,179: Ից հասել է 25,266-ի: Գյուղատնտեսական կոռպերացիայի անդամների մեծ մասը միջակ և չքաղոր գյուղացիներից են: 1925 թվին չայտառանում յեղել է 71 կաթնատեսական

արտել, 16 մեղվաբուծական, 2 անասնապահական
և 58 այլ կոռպերատիվ ընկերություններ:

ԿԱՊԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹԻ. Արդյունաբերությունն
ԹՅԱՆ ՅԵՎ ԳՅՈՒ- ու գյուղատնտեսությունը
ՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ սերտորեն կապված են մի-
միանց հետ՝ փոխադարձաբար կախում ունենի-
րաբից: Արդյունաբերությունը չի կարող զարգա-
նալ առանց գյուղատնտեսության, բայց և գյու-
ղատնտեսությունն առաջ գնալ չի կարող առանց
արդյունաբերության աջակցության:

Գյուղատնտեսությունն արդյունաբերության
համար մի անսպառ շուկա յեւ Հոկտեմբերյան
հեղափոխությունը գյուղացիությանը ողտվելու
յեւ հանձնել մի քանի տասնյակ միլիոն գհայատին
կալվածատիրական հող: Հեղափոխությունն գյու-
ղին ազատել ե կալվածատիրոջ և ցարական կա-
ռավարության հարյուրավոր միլիոն ոռութիվ վարձ
վճարելուց: Գյուղացիությունն իր բարեկեցու-
թյունը բարձրացնելու հնարավորություն ե ստա-
ցել:

Գյուղն արգեն իսկ հսկայական պահանջ ու-
նի արդյունաբերական ապրանքների, մի պա-
հանջ, զոր մեր արդյունաբերությունը գեռ ևս
լիրիքին բավարարելու հնարավորություն չունի:
Յեվ գորքան ավելի բարձրանա գյուղատնտեսու-
թյունը, այնքան ավելի յեւ մեծանալու գյուղի

պահանջը, այնքան ավելի յեւ ընդարձակվելու ար-
դյունաբերական ապրանքների ներքին շուկան:
Արդպիսի մի շուկա հաստատուն հենարան
ե արդյունաբերության ծավալ ման հա-
մար:

Գյուղատնտեսությունը հում նյութ ե մա-
տակարարում արդյունաբերության մի շարք ճյու-
ղերին. — մասածազործական ճյուղին նա տալիս
ե բամբակ, վուշ մետաքս. կաշվարդյունաբերու-
թյանը՝ կաշի, շաքարի արդյունաբերությանը՝ ճա-
կանգեղ: Վերևում տեսանք, վոր արդյունաբերու-
թյան աձման հետևանքով զարգանում են տեխ-
նիկական մշակությները, բարցրանում ե գյուղի
բարեկեցությունը, արդյունաբերությունը բավա-
րարում ե գյուղի սպառողական պահանջը:

Առանձնապես կարենը ե այն, վոր արդյու-
նաբերությունը գյուղատնտեսությանը մատա-
կարարում ե գյուղատնտեսական մեքենաներ,
գութանդիներ և այլն:

Գյուղացու աշխատանքի արտադրողականու-
թյունը և դրանով ել գյուղի ամբողջ բարեկե-
ցությունը կարող ե բարձրանալ միայն գյուղա-
տնտեսության մեքենայացման միջոցով. այսին-
ուն՝ յերբ գյուղում կը տարածվի ու կամքանա մե-
քենայական տեխնիկան: Մեքենայացումն իր հեր-
թին գյուղատնտեսությունը կոլեկտիվիզացիայի

յենթարկելու հիմքն է: Խոշոր մեքենայական տեխնիկան (որինակ՝ արակտորը), դրդում ե մանր տնտեսություններին միանալ, կողեկտիվներ կազմել, քանի վոր մանր տնտեսություններն, առանձին-առանձին չեն կարող կատարելագործված՝ գյուղատնտեսական խոշոր մեքենաներ ոգուագործել:

Բայց գյուղը բավական չափով գլուղատընտեսական մեքենաներ կը ստանա միայն այն ժամանակ, յերբ կը զարգանա արդյունաբերությունը:

Այդպիսով գլուղատնտեսության և արդյունաբերության փոխադարձ կապը հանդիսանում ե բանվոր դասակարգի և գլուղացիության դաշինքի հիմքը:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչի համար ե գործադրվում յերկաթը ժողովրդական տնտեսության մեջ:

2. Ի՞նչ նշանակություն ունեն բարածուին ու նավթը:

3. Ի՞նչպես ենք մենք սպազործում մեր բնական հարստությունները:

4. Մետադարգյունաբերությունն ինչու ինձբող արդյունաբերության հիմքը կազմում:

5. Վ՞րանք են գտնվում քարածիսային և

անվթալին արդյունաբերության գլխավոր շրջանները:

6. Հայահասակների ի՞նչ մշակույթներ են ամենից շատ ապահածված ԽՍՀՄ:

7. Ի՞նչ նշանակություն ունեն տեխնիկական մշակույթները գյուղատնտեսության մեջ:

8. Գյուղատնտեսության և արդյունաբերության իրարից փոխադարձ կախումն ունենալը ինչո՞ւ ե արտահայտվում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0187691

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.





